

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 40-ԱՄՅԱԿԸ
ԵՎ ՍՓՅՈՒՌԱՆՆԵՐԻ ԶԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Առանց չափազանցության կարելի է ասել, որ վերջին տարիների ընթացքում սփյուռքահայ մամուլը երբեք այնքան լայնորեն, այնքան համակողմանի կերպով չի լուսաբանել Սովետական Հայաստանի կյանքը, ինչպես անցյալ տարի: Եվ դա հասականալի է. 1960 թ. Սովետական Հայաստանը բոլորեց իր գոյության 40 տարին, և սփյուռքահայությունը մի առանձին շուրջով, մի առանձին խանդավառությամբ տոնեց Հայաստանում սովետական կարգերի հաստատման պանծալի հոբելյանը: Ահա արդեն մի տարուց ավելի է, ինչ սփյուռքահայ անվանի հասարակական գործիչներ, գրողներ, հրապարակագիրներ, արվեստի աշխատողներ, բանվորներ ու հողի մշակներ ելույթներ են ունենում մամուլի էջերում, արտահայտում իրենց մեծ, անկաշառ սերը հայրենիքի հանդեպ:

Մերձավոր ու Միջին Արևելքի, Եվրոպայի ու Ամերիկայի հայաշատ վայրերում կազմակերպվեցին հոբելյանական հանդեսներ, ժողովրդական տոնախմբություններ, գեղարվեստական ինքնագործունեության երեկոներ, զեկուցումներ, ցուցահանդեսներ, գրողներն ու արվեստագետները հոբելյանին նվիրեցին իրենց լավագույն ստեղծագործությունները:

Թովետական Հայաստանի 40-ամյա հոբելյանը լայնորեն նշեց լիբանանահայ մամուլը: Հայտնի է, որ Լիբանանը և հատկապես նրա մայրաքաղաք Բեյրութը սփյուռքահայ կյանքի գլխավոր կենտրոններից մեկն է: Այստեղ ներկայացված են սփյուռքահայ բոլոր քաղաքական պարտիաները: Այստեղ են ապրում ու ստեղծագործում Սովետական Հայաստանում ու Սփյուռքում հայտնի շատ գրողներ, արվեստագետներ, հասարակական ու քաղաքական գործիչներ: Այս հանգամանքը մենք ընդգծում ենք այն նպատակով, որպեսզի Լիբանանի օրինակով ցույց տանք, որ Սովետական Հայաստանի հոբելյանի տոնակատարությունը Սփյուռքում դեմոկրատական ու հայրենասիրական ուժերի ստուգատես հանդիսացավ: Ես առաջիկ հոտակությամբ

ցույց տվեց, թե ով է պաշտպանում Սովետական Հայաստանը, ով է կապված մայր-հայրենիքի հետ, և ով է դավում նրա դեմ, ով է վախենում նրա հետագա ծաղկումից ու հզորացումից:

Հայ ժողովրդի ազգային վերածննդի թվականի փառաբանումը Սփյուռքում, մեծ տոնակատարություն լինելուց բացի, հայրենասիրական զգացումների ստուգում էր, դիրքերի ճշտում, առաջադիմական ուժերի յուրառանգ ստուգատես: Եվ գոհունակությամբ պետք է ընդգծել, որ հայ ժողովրդի համար մեծ այդ տոնակատարության անցկացումը Սփյուռքում մի անգամ ևս հաստատեց այն ճշմարտությունը, որ սփյուռքահայ աշխատավոր զանգվածների ու հայ մտավորականության ճնշող մեծամասնությունը կանգնած է հայրենասիրական դիրքերում, կապված է Սովետական Հայաստանի հետ և պաշտպանում է նրա շահերը:

«Սփյուռքահայը այսօր երեկի անհայրենիք, ուղեկորույս և վիրավորված ազգային արժանապատվությամբ խլիպը չէ այլևս,— գրում է «Մեր նշանաբանն է Առաջ» թերթը,— որովհետև ան ունի հայրենիք մը, որ ամենաարդիական թեքնիկով օժտված իր հզոր արդյունաբերությամբ, համաշխարհային ամենաառաջավոր դիրքերուն հասած գիտական իր գործունեությամբ և իր բաղմադարյան մշակույթի աննախընթաց ծաղկումով մի երկիր է, որը ոչ միայն առաջին տեղը կգտնվի Միջին Արևելքի անխորհուրդ երկրներուն մեջ, այլ օգնության ձեռք կմեկնի անոնց տնտեսական, բժշկագիտական և քաղաքական գիտելիքներուն վրա»¹: Թերթում հրապարակախոսական ջերմ հոդվածներով հանդես են եկել Լիբանանում հայտնի հասարակական գործիչներ Հարություն Մադոյանը, Հովհաննես Աղբալյանը և ուրիշներ: Այդ հոդվածներում շոշափում են նաև հայ ժողովրդի ազա-

¹ «Մեր նշանաբանն է Առաջ», 1960, 27 նոյեմբերի:

տագրական պայքարի գլխավոր էտապները, ընդգծվում է Հայաստանում սովետական կարգերի հաստատման պատմական նշանակությունը հայ ժողովրդի համար: «1920 թվականի նոյեմբերի 29-ը, — գրում է Հարություն Մազոյանը, — հայոց պատմության մեջ փրկարար անկյունագարձ մըն է, որովհետև այն եղավ հիմնական պատմական, վճռական անկյունագարձ հայ ժողովրդի ազատագրական պայքարներուն քաղաքական, ուղղութիւնը և ղեկավարութիւնը մեջ: Հայաստանի փրկութիւնը կարելի եղավ հայ ժողովրդի ապագան սոցիալիստական մուսուր ճակատագրին կապելով միայն»¹:

Այս սուղերը գրելուց մեկ ամիս հետո Քելրուֆի փողոցներից մեկում մահափորձ կատարվեց նրա դեմ: Հարություն Մազոյանը առաջադիմական գործիչ է, իսկ այն թերթը, որի էջերում նա հոդված է հրատարակել, պատկանում է կրեմլյանի գեմեոկրատական շարժման ձախ թեկն: Մակայն մեր օրերում միայն նրանք չէ, որ խոսում ու գրում են Սովետական Հայաստանի պատմական նվաճումների մասին: Միջուգրահայ բոլոր քաղաքական պարտիաներն ու խմբավորումները, բացի, իհարկե, դաշնակցներից, խոստովանում են, որ հայ ժողովուրդը 40 տարվա ընթացքում այնպիսի ստեղծագործական թռիչք կատարեց, որպիսին երբեք չի արձանագրվել նրա բազմադարյան ողջ պատմության ընթացքում: Ահա թե ինչ է գրում ռավիվար հայտնի գործիչներից Հրաչ Սեդրակյանը «Զարթոնք» թերթում. «Անհուն երախտագիտական զգացում մը՝ հանդես հայրենիքի մեր եղբայրներուն և քույրերուն, որոնք քառասուն տարիներու ընթացքին, հարասե աշխատանքով, մեծ զոհողություններով և նաև ի գին շատ զրկանքներու, իրենց համար և նաև բոլորին համար կերտեցին գեղեցիկ հայրենիք մը: Վերաշինվեցավ երկիրը, հին և խեղճ գյուղաքաղաքներն ու գյուղերը վերածվեցան արդիական քաղաքներու ու ավաններու, ծաղկեցան արտերն ու դաշտերը. նախանձելի վերելք արձանագրեցին գիտությունը, մշակույթն ու արվեստները, ուսումնասիրվեցան և ժողովրդականացան հայոց պատմության փառքերը: Մեր փոքր երկիրը դարձավ ճարտարվեստի առաջադիմ կենտրոն մը»²: Նույն թերթում հոդվածներով հանդես են եկել հանրածանոթ գրողներ Վահե Վահյանը և Սիրան Սեզան: «Թանկմաց և ուղղադատ որևէ մարդու, — գրում է Վ. Վահյանը, — առավել ևս հայ մարդու միտքին ու

խիղճին մեջ, այդ թվականը կրնա գնահատվել մեկ ու նույն արժեքով միայն. — մղձավանջային դարերու խավարեն ետք, Վարուժանի պատկերով՝ «Վարդահեղեղ արշալույսի» ավետարները իրեն, հայության համար այնքան նվիրական որքան սարսուղի եղած է անոր ողբերգությունը՝ այդ թվականը մինչև»: Իսկ Սիրան Սեզան հետևյալ գեղեցիկ բառերով է բնութագրում հայ ժողովրդի նորագույն պատմության նշանակությունը. «Նոր կորենացի մը անշուշտ պիտի գրեք սասներտոք գարու այս զարմանահրապատմությունը փոքրիկ, հերոսական ազգի մը»³:

Սովետական Հայաստանի 40-ամյակին հատուկ հոբելյանական համար է նվիրել «Արարատ» թերթը, որը գրում է. «1920 թ. նոյեմբերի 29-ը հայ ժողովրդի ազգային ու պետական վերածնունդը խորհրդանշող պատմական անկյունագարձն է: Խոսիլ մայր հայրենիքի 40-ամյակին մասին կնշանակե պատմականը ընել ազատագրված այդ հողին վրա 40 երկար տարիներ ի վեր տարված ստեղծագործական, հերոսական աշխատանքին: Եվ այսօր, քառասունամյա մեր մայր հայրենիքի ժպտուն դեմքը դիտելով, մեր գլխարկները վար կառնենք պահ մը, մայր երկրի մեր եզրայրներուն ու քույրերուն առջև»⁴:

Նոյեմբերի 28-ին արոսասհմանյան երկրների հետ բարեկամության ու կուլտուրական կապի ընկերության Քելրուֆի բաժանմունքի սրահում տեղի ունեցավ Սովետական Հայաստանի 40-ամյակին նվիրված հանդիսավոր երեկո, որին ներկա էին հարյուրավոր հայրենակալուտ հայեր, Քելրուֆի հայ մտավորականության ներկայացուցիչներ, սովետական դեսպանատան աշխատողներ, ժուռնալիստներ: Հոբելյանի առթիվ զեկուցումով հանդես եկավ Պետրոս Մինասյանը: «Հայ ժողովրդի փրկությունը կարելի դարձավ միայն հայության ճակատագիրը կապելով ռուս մեծ ժողովուրդի ճակատագրին հետ, ինչպես անցյալին մարգարեսացած էին: Արտվյանն ու Նալբանդյանը, — սասց զեկուցողը: — Այսօրվան մեր հայրենիքը լուսապսակումն է անցյալի մեր դարավոր մարտունեքուն ու մարտնչուններուն, որ երբեմն սայթաքեցավ իր ուղիին մեջ, սակայն հասավ ոտքի: Իր իրականությունը»⁵: Երեկոյից հետո հանդիսականները դիտեցին «Հայրենի հողի վրա» ֆիլմը և Հայաստանի նվաճումները պատկերող

¹ «Մեր նշանաբանն է Առաջ», 1960, 27 նոյեմբերի:
² «Զարթոնք», 1960, 29 նոյեմբերի:

³ «Զարթոնք», 1960, 29 նոյեմբերի:
⁴ «Արարատ», 1960, 30 նոյեմբերի:
⁵ «Մեր նշանաբանն է Առաջ», 1960, 4 զեկտեմբերի:

ցուցահանդես: Հանդիսավոր ժողովներ տեղի ունեցան նաև Քնչրութի մի շարք թաղերում (Հնճրն, Չարշարուխ, Խալիլ Պատավի և այլն): Մյուս օրը, նոյեմբերի 29-ին հորելյանի առթիվ հանդիսություն կազմակերպվեց Սահակյան Վարժարանի սրահում:

Էրանանահայ հասարակայնության հետ միասին հայ ժողովրդի վերածննդի տոնը ողջունեցին նաև արաբական ժողովրդի առաջադեմ ներկայացուցիչները: Մենք դժուրանկություններ կարգացինք արար անվանի գրող Միխայիլ Կախմեի ողջույնը, մի գրող, որը «Մեր նշանաբանն է Առաջ» թերթի պատկերավոր արտահայտությամբ, «Մանինի լանջերին կողջունե Արագածի կատարին բոցավառվող մեր քառասնամյա ջահը»: «Այս պահուս, — գրում է նախմեմ, — երբ ամբողջ աշխարհի մեջ կբարձրանա հսկայական ալիք մը իմպերիալիզմի բոլոր ձևերուն դեմ, անհետաձգելի հուշակելով բոլոր ժողովուրդներու ազատության իրավունքի կենսագործումը, ուրախալի է ինձ համար ողջույնի խոսք ուղղել, ամենաչեղձ շնորհավորություններ և ծաղկման ու բարգավաճման լավագույն մարթնանքներ հայտնել պետության մը, որ 40 տարիներ ի վեր դարձած է ազատ ու անկախ... Սովետական Հայաստանը մեծ քայլերով կառուցանա կրթության, գիտության, արդյունաբերության, հողագործության և մանավանդ մշակույթի մարզերեն ներս: Հայ գրականությունը կթարգմանվի այսօր բազմաթիվ լեզուներու, հայ արվեստագետները մեծ հարգանք կվայելեն Հայաստանի սահմաններեն դուրս և համաշխարհային հուշակի հասած են Խաչատուրյանը, Իսահակյանը, Չարենցը, Համբարձումյանը և ուրիշներ: Մեծ հուշակ կվայելեն բարձրաստիճան գիտնականներ, սրտնցմն պետք է հիշատակել մարաշախոտ Հովհաննես Բաղրամյանը, որ իր փառքի գանձիին հասավ երկրորդ համաշխարհային պատերազմին: Այս բոլորը կարելի չէին ըլլար, եթէ Հայաստանը անդամը չըլլար Սովետական մեծ ընտանիքին»:

Սովետական Հայաստանի քառասունամյակը լայնորեն տոնեցին բուլղարահայ և ռուսինահայ գաղութները: Այդ աշխատանքը Ռուսինալուսում դեկավրում էր Ստեփան Եահումյանի անվան տան վարչությունը, իսկ Բուլղարիայում՝ Երևան կուլտուրական միությունը և նրա բազմաթիվ մասնաճյուղերը երկրի մյուս քաղաքներում: Հորելյանական հանդեսներ տեղի ունեցան Բուխարեստում, Սոֆիայում, Պլովդի-

վում, Բուրգասում, Սիփլենում և ուրիշ քաղաքներում: Հորելյանական հանդեսներին ներկա գտնվեցին հայ, բուլղար ու ռուսին պետական և հասարակական գործիչներ: Տեղի ունեցան գեղարվեստական ճոխ երեկոներ: Տոնակատարություններին իրենց մասնակցությունը բերեցին, հայերից բացի, ռուսինական ու բուլղարական գերասաններ և երգիչներ:

Այդ իրադարձություններին լայնորեն արձագանքեց մամուլը: Ահա բուլղարահայ «Երևան» թերթի առաջին էջում պատկերված է Սովետական Հայաստանը խորհրդանշող հայուհին՝ կանգնած ամբողջ հասակով մեկ, նա գլխից վեր բռնել է դավին պակը: Հետևում վեր են խոյանում մեր ռեսպուբլիկայի նորակառույցները, իսկ նրանցից մեկի դադաթին փողփողում է Կարմիր դրոշմը՝ «1920—1960» պատմական թվականներով: Ավելի հեռվում հավերժական Արարատն է: Ու նայելով այդ շքեղ տեսարանին, մի անգամ ևս համոզվում ես այն մեծ ճշմարտության մեջ, որ, ինչպես «Երևան» թերթն է գրում, «Հայաստանը երբեք այսօրվանն ալիքի հզոր, իսկ հայ ժողովուրդը ալիքի երջանիկ չի եղել»: «Նոր կյանք» թերթում հոգվածներով ու ողջուններով հանդես են եկել Ռուսինա-սովետական բարեկամության ընդհանուր խորհրդի փոխնախագահ Մարին Ֆլորիա Յոնեսոբն, հայտնի հայագետ Վլադ Բընըցյանուն, Ռուսինական ժողովրդական Ռեսպուբլիկայի Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Գրիգոր Զամբարյանը, նկարիչ Հրանտ Ավագյանը, Տիգրան Տեր-Գրիգորյանը և ուրիշներ: «Եստ բան կարդացի նոր կյանքի մասին, — գրում է Վլադ Բընըցյանուն «Նոր կյանք» թերթի նոյեմբերի 25-ի համարում, — որ իր հուրը գտած էր Հայաստանի մեջ, և իմ զգացած խանդավառությունը հանկարծ լեզու ելավ տեսնելով, որ հայերը, գարեք տեղ քաղաքական ու տնտեսական լուծեքի հետո, իրենց տեղը գրավեցին Սովետական ժողովուրդներու բնտանիքին մեջ և այժմ անոնք ազատորեն կրնան զարգանալ՝ օգտագործելով հայ ժողովրդի բարձր տաղանդը՝ հօգուտ հայրենիքին ու ստեղծված նոր կյանքին»: «Իմ աչքերովս տեսա Սովետական Հայաստանը ինչպես նաև այն մեծ հոգածությունը հնազարդյան ու այժմու մշակույթին ու արվեստներուն հանդեպ» — գրում է նկարիչ Հրանտ Ավագյանը: — Երջանիկ եմ շնորհավորելով մայր հայրենիքս, որ միայն 40 տարվա բնթացքին հասավ այս բարձր մակարդակին՝ բոլոր բնագավառներուն մեջ»:

Բազմամարդ էր նոյեմբերի 27-ին Փարիզի Փլիշլի ընդարձակ սրահը: Այդ օրը այստեղ հրավիրված էր Սովետական Հայաստանի

¹ Տե՛ս «Մեր նշանաբանն է Առաջ» թերթում, 1960, 4 դեկտեմբերի:

40-ամյակին նվիրված հանդիսավոր երեկո: Այստեղ էին ֆրանս-սովետական բարեկամության ընկերության նախագահ Անդրե Փիեռարը, սովետական զևսպանության ներկայացուցիչները, Սովետական Միության Գիտությունների ակադեմիայի անդամ, Յունեսկոյի գործադիր կոմիտեի անդամ Նորայր Սիսակյանը, փարիզահայ հասարակայնության բազմաթիվ ներկայացուցիչներ, հայ կուլտուրայի, արվեստի ու գրականության գործիչները: Բազմաթիվ շնորհավորական ելույթներից հետո երեկոն ավարտվեց դեզարվետական բաժնով: Ֆրանսահայ գաղութում հորեյլանին նախապատրաստվելու և այն անցկացնելու աշխատանքները ղեկավարել են ֆրանսահայ մշակույթային միությունը և երիտասարդական միությունը (ԺԱՅ), Այդ մասին են պատմում «Աշխարհ» շաբաթաթերթը և ֆրանսահայ երիտասարդների միության օրգան, ֆրանսերեն լեզվով հրատարակվող «Մեր ձայնը» ամսաթերթը: Մշակույթային միության ջանքերով Ֆրանսիայի հայաշատ վայրերում կազմակերպվել են հորեյլանական երեկոներ, գեկուցումներ, ցուցահանդեսներ: Մասնավորապես Փարիզում կազմակերպվել է «Հայ-ֆրանսիական մշակույթի ցուցահանդես»: Ֆրանսահայ երիտասարդական միությունը իր IV ֆեատիվալը նվիրել է Սովետական Հայաստանին: Նոյեմբերի 10-ին, 11-ին, 12-ին, 13-ին և 14-ին հաղարավոր ֆրանսահայեր կղան Փարիզի Սալզը լա Եիմի սրահում, ուր դիտեցին հայ մշակույթի ցուցահանդեսը: Առաջին և երկրորդ օրերի ընթացքում 120 երիտասարդներ ու ազգիկներ կույթներ ունեցան գեղարվեստական ինքնագործունեության տարբեր սալարեզիններում: Հետագա օրերին փարիզահայությունը մեծ հեջաբքությունում դիտեց հայ կերպարվեստի ցուցահանդեսը: Միաժամանակ ցուցադրվեցին Հայաստանից նոր ստացված մոտ 300 լուսանկարներ, որոնք ներկայացնում էին հայրենիքի առօրյան իր բազմազան կողմերով:

«Մեր նշանաբանն է Առաջ» թերթի Փարիզի թղթակիցը, պատմելով իր տպավորությունները, գրում է. «Ֆրանսահայ իրականությունը ճանշըցողները կրնան ընդունել թե ասկե ավելի մեծ հաջողություն չէինք կրնար երևակայել: Մեզի համար հպարտություն է, որ ԺԱՅ-ի շուրջ բուլովում երիտասարդությունը զինք հյուրընկալող երկրին մտավորական արժեքներուն շափ լավ կճանչնա իր հեռավոր հայրենիքի արժեքները և կսիրե երկունքն ալ հավասարապես... Ապրեն երիտասարդները, ապրի ֆրանսահայ հայրենասեր դաղութը, որ ոչ մի ջանք չխնայեց իր զավակներուն հաջողության համար»: Ֆրանսահայ մտավորականության շատ ներկայացուցիչներ

հանդես եկան «Աշխարհ» թերթի էջերում, որը սկսել է լույս տեսնել անցյալ տարի, այն բանից հետո, երբ ֆրանսիական իշխանությունները արգելեցին «Հույս Փարիզի» թերթի հրատարակությունը: Ահա թե ինչ է գրում Սնովը Արմենը թերթի համարներից մեկում. «Պետք է խոր թափանցումով անդրադառնալ, թե տոնվածը օրացույցի հասարակ ցուցումի մը հիշատակությունը չէ, այլ անկյունադարձային պատմական մեծ թվականն է Հայաստան աշխարհին և ազգին վերջնական հիմնական ազատագրության երկու հազար ութ հարյուր տարիներու բաղաբական խոռվահույզ տաղանայներու անվերջ ճգնաժամներն, գոյապայքարի համար տեսականապես ճակատելով՝ պարսիկներու, մակեդոնացիներու, հռոմայեցիներու, բյուզանդացիներու, շինգիզ-խաներու, շահ-արամներու, թաթարներու, սելջուկներու, արաբներու և թուրքերու արյունախանձ ասպատակություններուն դեմ... Համովին, ազգովին, մեր հայրենիքի փառատոնին առիթով, հպարտ կուրծքով երգենք բարձրագու՜ն—Մաղկիր ազատ իմ հայրենիքը»:

Դեռևս անցյալ տարվա սեպտեմբերին ամերիկահայ Աղաչյան խորհրդի կենտրոնական վարչությունը հատուկ ուղերձով դիմեց ամերիկահայությանը, որով կոչ էր անում. «Այս տարի ավելի եռանդով գործի լծվեք աննախընթաց շքեղությունը ու փառքով ստնելու պանծալի մայր հայրենիքի հսկայական նվաճումներու քառասնամյակը, անոր ազատության հաղթանակը»¹: Արձագանքելով այդ ուղերձին, ԱՄՆ-ի մի շարք քաղաքներում ստեղծված տեղական հանձնաժողովները սկսեցին եռանդուն կերպով պատրաստվել տոնակատարությանը: Ինչնին հասկանալի է, որ այժմ, երբ, «սառը պատերազմի» տիրահաշակ քաղաքականությունը դեռ վերջնականապես չի թաղված, հայ ժողովրդական զանդվածների, առաջադիմական կազմակերպությունների համար Հայաստանի 40-ամյակի նշումը ԱՄՆ-ում կապված էր որոշակի դժվարությունների հետ: Մի շարք քաղաքներում դաշնակ թափթիուկները փորձեցին խանգարել տոնակատարության աշխատանքներին, բայց, ինչպես պետք էր սպասել, նրանց այդ փորձերը ձախողվեցին: Ինչպես գրում է «Լրաբեր» թերթը, «հակառակ հայ ժողովրդի ներքին թշնամիներու փափուրջային և դավադրական աշխատանքներուն, ամերիկահայությունը անգամ մը ևս հայտարարեց, թե իր հայրենասիրությունը անսակարելի է և իր աճող ու զեղածիծաղ մայր հայրենիքի հանդեպ իր սերն ու հավատքը՝ խորունկ ու անխախտելի... Հայրենասեր հայու-

¹ «Նոր օր», 1960, 23 սեպտեմբերի:

Քյունը հարարությանը ու երջանիկ զգացումներով տոնեց և տակալին կշարունակե տոնել իր պանծալի հայրենիքի՝ հորելյանական տարին»։ Տոնական հանդիսներ տեղի ունեցան Նյու-Յորքում, Ֆիլադելֆիայում, Բոստոնում, Գեարդյուտում, Չիկագոյում, Լոս-Անժելոսում, Ֆրեզնոյում և այլ քաղաքներում։

Ամերիկահայ աշխատավորության ու մտավորականության շատ ներկայացուցիչներ ելույթներ ունեցան «Լրաբեր», «Նոր օր», «Պայքար» և այլ թերթերի կղերում։ Ընթերցողի ուշադրությանն ենք հանձնում «Նոր օր» թերթի առաջնորդող հոդվածից մի հատված. «Այսօր հայ ժողովուրդը անհուն ցնծությամբ և արդարացիորեն կհպարտանա իր հարազատ զավակներուն սխրագործություններով՝ գիտության և արվեստի մարդերուն մեջ։ Վիկտոր Համբարձումյան, Ալիխանյան եղբայրներ այժմ տիտան դեմքեր դարձած են գիտական շրջանակներու մեջ՝ իրենց հանձարին փայլատաղումներով։ Արամ հայա-արքյանի երաժշտությունը, Լիսիցյանի և Գոհար Գասպարյանի երգը հայուն փառք կցուրծակեն օտար բնմերու վրա։ Սարյանի վրձինը միջազգային ցուցահանդեսներու մեջ կսփռե Հայաստանի դուրբիլ բնակարանները՝ հավերժական Արարատի վեհապանժ գաղաթով, անասան ու անհաղթելի՝ նման իր փեղերուն տակ ապրող հայ ժողովուրդին։ Երեկ Չարենցի, Քումանյանի և Իսահակյանի, իսկ այսօր Ջորյանի, Շիրազի և Կապուտիկյանի գեղեցկահյուս գրականությունը հայուն զգայուն և սիրավառ սրտին հույզերովն ու տենչանքներովը կներշնչե գրասեր ժողովուրդները։ Եվ ասոնք ասուպային շողարձակումներ չեն, այլ հարածուն և անկասելի ոստյուններ գեպի կատարելության կատարները»։

Հարավային Ամերիկայի մի շարք քաղաքներում (Բուենոս-Այրես, Սան-Պաուլո, Մոնտեվիդեո) տեղի ունեցած հանդեսների մասին պատմում են «Հայ կյանք», «Սուրճանդակ», «Շարժում» թերթերը։

Սովետական Հայաստանի 40-ամյա հորելյանի տոնակատարությունների առնչությամբ, բնականաբար, նոր սրությամբ էր բնորոշվում այն հարցը, թե ինչպիսի կենսական նշանակություն ունեն սփյուռքահայության համար հայ պաշտոնների կուլտուրական կապերը Սովետական Հայաստանի հետ։ Անցյալ տարի Հայաստան այցելած Կ. Աղամյանը «Սուրճանդակ» թերթում գրում է, որ եթե Սովետական Հայաստանը չլիներ, անկարելի պետք է լիներ արտա-

սահմանում հայ լեզվի ու մշակույթի գոյությունը և պատմությունը նաև այսօրվա մեր գաղութների վրա շուտով պիտի իջեցնեք մոռացումի այն թանձր վարագույրը, որի հետևում ծածկված են բազմաթիվ հայկական հին համայնքներ։ Այս նույն գիտակցությամբ է, որ Ա. Տեյթմենչյանը կոչ է անում սիրել և պաշտպանել հայրենիքը այնպես, ինչպես որդին պարտավոր է պաշտպանել իր մորը, «Երբ սուր քաշն նրա վրա»։ «Ազգային որեէ ձեռնարկ կամ հաստատություն,— իրավացիորեն ընդգծում է «Նոր օր» թերթը,— գատապարտված է հյուժումի, եթե իր ավյունն ու ավիշը առած չէ ազգին բարախուն սիրտեն, մայր հայրենիքին, եթե ան գործոն մասնակցություն չի բերեր հայրենիքի խոյանքներուն, թող դա ըլլա, ինչ փուլթ, Սփյուռքի մեջ»։

Վերջին ամիսների ընթացքում սփյուռքահայ շատ գրողներ ու բանաստեղծներ հրապարակեցին Սովետական Հայաստանի հորելյանի նվիրված իրենց արձակ ու շափածո երկերը։ Նոր ստեղծագործություններով հանդես եկան Գառնիկ Աղդարյանը, Գեղամ Սևանը, Թ. Քորանյանը և ուրիշներ։ Ահա Գառնիկ Աղդարյանի «Հրաշալի բառասանամյակ» պոեմից մի հատված, որ հրապարակված է «Մեր նշանաբանն է Առաջ» թերթում.

Քառասուն տունով երգ մըն է կարծես
Հայաստանն այսօր.

— Պոեմ մի բոսոր,
Որուն ամեն տունին, տողին մեջ
Հազար տրոփ կա, հազար արձագանք,
Որուն ամեն մեկ բառեն ներս կապրի
Մեր ժողովրդի ձայնն անլռելի:
Երգ մը լուսավոր՝
Որուն մուսան է մեր հին, բայց մեր նոր
երազը անմար,
Քերթողը ամբողջ ժողովուրդը մեր,
Եվ անոր ժպիտ, թուխը ընծայող մեծ
երաժիշտը՝
Կոմունիզմն անմեռ²:

Չափազանց ընտրոշ է ու հետաքրքրական, որ հայանի հասարակական գործիչ ու բանաստեղծ Վահան Մալեզյանը, որն այժմ գտնվում է խոր ծերության մեջ, հեռավոր նիցցա-քաղաքում երիտասարդական ավյունով բանաստեղծություն է նվիրել Սովետական Հայաստանին։ Ահա մի քառյակ այդ բանաստեղծությունից.

¹ «Նոր օր», 1960, 4 դեկտեմբերի:
² «Մեր նշանաբանն է Առաջ», 1960, 29 նոյեմբերի:

¹ «Լրաբեր», 1960, 6 դեկտեմբերի:
² «Նոր օր», 1960, 29 նոյեմբերի:

Քառասնամյակն ես կողջունեմ անհուն
 սիրով մը խանդավառ,
 Եվ ծանրագիր քանզի մեծ տոնն է պաշտելի
 հայրենիքիս,
 Հրաշափառ հայության, մեր «Բըշվառ անտեր»
 քիրտ գերության
 Այլ վերջ տվավ, ազատության պարզած գրոշը
 հաղթական¹:

Սփյուռքահայությունը, ինչպես և աշխարհի բոլոր հասարակ մարդիկ, խորապես մտահոգված է խաղաղության ճակատագրով: Բազում արհամիրքներ տեսած հայ մասսաները անցյալի դառն փորձով գիտեն, թե ինչ կնշանակեր նրանց համար նոր ավերիչ պատերազմը, նրանք գիտեն, որ միայն խաղաղության պայմաններում կարող է շարունակվել իրենց հայրենիքի հետագա զարգացումը ու բարգավաճումը: Ահա թե ինչու Սովետական Հայաստանի 40-ամյակին նվիրված հանդեսներն անցան խաղաղության պաշտպանության ու ամրապնդման նշանաբանով:

«Փող, ուրեմն, Հայաստանի սովետականացման այս պահնալի 40-ամյակի առթիվ,—գրում է Սոֆիայի բնակիչ Սարգիս Փափազյանը,—աշխարհի բոլոր հայերը ուխտեն, անկախաբար իրենց քաղաքական ու կրոնական դավանանքից, համերաշխաբար կրկնապատկել իրենց եռանդն ու շանքերը, հայրենիքի բարգավաճման, համաշխարհային խաղաղության և բազմիցս նահատակված հայ ժողովրդի երջանկության համար»²:

Մեր կողմից արգեն հիշատակված Ամերիկահայ Ազգային խորհրդի ուղերձի մեջ ընդգծվում է, որ «խաղաղությունն է ներկա մարդկության անհրաժեշտ պահանջը», և նրա միջոցով է, որ հայ ժողովուրդը հնարավորություն կունենա այսուհետ ևս ավելի շենացնելու, կառուցելու ու հզորացնելու իր հայրենիքը: Անցյալ տարվա վերջերին Պլովդիվ քաղաքում տեղի ունեցած միջազգային XIX տոնավաճառի առ-

թիվ Քուլդարիա այցելեց Սովետական Միության մարշալ Բաղրամյանը: Սփյուռքահայությունը մեծ գոհունակությամբ ընդունեց նրա այն խոսքերը, որ նա ասել է «Մեր նշանաբանն է Առաջ: Թերթի թղթակցի հետ անեցած զրույցի ընթացքում. «Առաջի» բնթերթողները և հայերը ահասարակ ամեն տեղ ու միշտ թող լինեն խաղաղության ուժերի շարքերում»:

Ինչպես անցյալ տարիներին, այս ասորի էլ մեծ թվով հայ տուրիստներ այցելեցին Սովետական Հայաստան: Նրանք այժմ սփյուռքահայ առաջադիմական թերթերի խմբագրություններին, մշակույթային կազմակերպություններին, ակումբներին ու դպրոցներին ցանկալի հյուրերն են: Բազմահազար հայերի առաջ նրանք պատմում են իրենց տպավորությունները և միշտ ընդգծում այն միտքը, որ հայ ժողովրդի համար, ինչպես աշխարհի բոլոր ժողովուրդների համար, խաղաղությունը կենսական հարց է: «Մեր մտղթանքն է,— Արգենտինայում հրատարակվող «Հայ կյանք» թերթում գրում է Գևորգ Փեղշյանը,— որ մշտնջենական խաղաղությունը անպակաս մնա Հայաստանի և աշխարհի մեջ և մեր ժողովուրդը պատենությունն ունենա իր հերոսական աշխատանքներու հետևանքով սանդժված բարիքները վայելելու: Օտար երկիրներու մեջ ապրող, ծնած ու մեծացած կենսունակ տարրը հայության, այսօր կշարունակի ապրել այդ հոգեվիճակով և այդ դիտակցությամբ»:

Ընդունված է ասել, որ մամուլը կյանքի հայելին է: Թերթելով այս օրերին սփյուռքահայ մամուլը, մենք, ինչպես հայելու մեջ, տեսնում ենք աշխարհի բոլոր երկրներում ցրված ասարակից հայ աշխատավոր մասսաների անկաշառ, խորունկ ու խանդավառ սերը իրենց վերածնված Հայրենիքի հանդեպ, նրանց այրող ատելությունը հայրենիքի բոլոր թշնամիներին հատմամբ, նրանց անասան հավատը հարազատ ժողովրդի ավելի լուսավոր ու ավելի երջանիկ ապագայի մասին:

Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ

¹ «Երկիր», 1960, 10 նոյեմբերի:

² «Երևան», 1960, 25 նոյեմբերի:

³ «Հայ կյանք», 1960, 26 հոկտեմբերի: